

**2023 թվականի հունվարի 31-ի ՀՀ ԿԲ խորհրդի նիստին մասնակցում էին՝ ՀՀ ԿԲ նախագահ Մարտին Գալստյանը, ՀՀ ԿԲ նախագահի տեղակալներ Արմեն Նուրբեկյանը և Հովհաննես Խաչատրյանը, խորհրդի անդամներ Հասմիկ Ղահրամանյանը, Դավիթ Նահապետյանը, Արտակ Մանուկյանը, Լևոն Սահակյանը, Նարեկ Ղազարյանը:**

Խորհրդի նիստը սկսվեց հունվարի 31-ի դրությամբ Իրավիճակային հաշվետվության ներկայացմամբ: Քննարկվեցին գնաճի, արտաքին միջավայրի, իրական, հարկաբյուջետային, ֆինանսական և դրամավարկային հատվածների զարգացումները:

Ներկայացվեցին արտաքին հատվածի ընթացիկ զարգացումները: Արձանագրվեց, որ չորրորդ եռամսյակում համաշխարհային տնտեսությունում շարունակվում են տնտեսական ակտիվության որոշակի դանդաղման միտումները, չնայած կարճաժամկետ հեռանկարի վերաբերյալ սպասումները վերագնահատվել են դրական ուղղությամբ՝ պայմանավորված Չինաստանում համավարակային սահմանափակումների թուլացման պայմաններում տնտեսության ավելի արագ վերականգնման սպասումներով: Այնուամենայնիվ, համաշխարհային տնտեսության սպասվող թույլ պահանջարկի և ֆինանսական պայմանների խստացման ներքո միջազգային ապրանքահումքային շուկաներում դիտվում է որոշ ապրանքների գների նվազում, ինչն արտահայտվում է նաև համաշխարհային գնաճի նվազմամբ: Այդուհանդերձ, պահպանվող բարձր պահանջարկի և գնաճային սպասումների ազդեցությամբ ՀՀ հիմնական գործընկեր երկրներում պահպանվում է բարձր գնաճային միջավայր: Այս պայմաններում զարգացած երկրների կենտրոնական բանկերը առաջիկայում կշարունակեն խստացնել դրամավարկային պայմանները: Նման գործողությունների արդյունքում համաշխարհային պահանջարկը կշարունակի որոշակիորեն թուլանալ և միջազգային ապրանքահումքային շուկաներում գները կնվազեն՝ նպաստելով նաև համաշխարհային գնաճային միջավայրի մեղմմանն ու արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա փոխանցվող գնաճային ազդեցությունների թուլացմանը:

Խորհուրդը քննարկեց ՀՀ տնտեսության զարգացումները և արձանագրվեց, որ 2022թ-ի վերջին ևս պահպանվել է բարձր տնտեսական ակտիվություն՝ պայմանավորված գերազանցապես ծառայությունների ճյուղում ձևավորված արտաքին մեծ պահանջարկով: Բարձր աճ է գրանցվել նաև շինարարության ճյուղում: Միևնույն ժամանակ, ծառայությունների և արդյունաբերության ոլորտներում շարունակվել են արտահանման և թողարկման ներուժի ավելացման միտումները:

Քննարկվեցին ՀՀ ֆինանսական շուկայի զարգացումները և արձանագրվեց, որ չորրորդ եռամսյակում շուկայական կարճաժամկետ տոկոսադրույքները ձևավորվել են քաղաքականության տոկոսադրույքի շրջակայքում: Միևնույն ժամանակ, զարգացող երկրների համեմատաբար դրական տնտեսական հեռանկարով և ՀՀ տնտեսությանը ներհատուկ որոշ գործոնների ազդեցությամբ ՀՀ երկրի ռիսկ-հավելավճարը սպասվածից ավելի ցածր է եղել: Հարկ է նշել, որ, ըստ ՀՀ ֆինանսական համակարգի շրջանում ԿԲ կողմից արված հարցման արդյունքների, քաղաքականության տոկոսադրույքի վերաբերյալ համակարգի սպասումները որոշակի մեղմվել են՝ արտահայտելով գնաճային ռիսկերի թուլացման մասին շուկայական ակնկալիքները:

Խորհրդին ներկայացվեցին նաև գնաճային զարգացումները, որի համատեքստում փաստվեց, որ 2022թ. դեկտեմբերին գրանցվել է 1.1% գնաճ՝ նախորդ տարվա նույն ամսվա 1.6%-ի փոխարեն: Ամսվա ընթացքում գնաճը պայմանավորվել է պարենային ապրանքների գների 1.4% և ծառայությունների սակագների 0.4% աճերով, իսկ ոչ պարենային ապրանքների գներն ամսվա ընթացքում մնացել են անփոփոխ: **Արդյունքում՝ 12-ամսյա գնաճը շարունակել է նվազել և ամսվա վերջին կազմել է 8.3%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս նվազել է՝ կազմելով 9.5 %:** Արձանագրվեց նաև, որ ԿԲ իրականացրած զսպող դրամավարկային քաղաքականության, դրամի

արժևորման և արտաքին հատվածից գնաճային ազդեցության թուլացման արդյունքում ՀՀ ընդհանուր գնաճային միջավայրն աստիճանաբար մեղմվում է, սակայն նաև փաստվեց, որ պահպանվող բարձր պահանջարկը զգալիորեն նպաստում է աշխատավարձերի և առանձին ապրանքների ու ծառայությունների գների աճին:

Իրավիճակային հաշվետվության և արտաքին ու ներքին մակրոտնտեսական զարգացումների քննարկումից հետո Խորհուրդն անցավ մակրոտնտեսական սցենարների, դրամավարկային քաղաքականության ուղղությունների քննարկմանն ու քաղաքականության տոկոսադրույքի որոշման կայացմանը: Կանխատեսող թիմը Խորհրդին էր ներկայացրել վերոնշյալ մակրոտնտեսական իրավիճակում առաջիկա տնտեսական զարգացման հեռանկարներից ածանցվող հնարավոր դրամավարկային ռիսկերը նկարագրող սցենարներ: Խորհրդի անդամները համակարծիք էին, որ մի կողմից արտաքին հատվածից ՀՀ տնտեսության վրա փոխանցվող գնաճային ազդեցությունները շարունակում են թուլանալ՝ պայմանավորված ՀՀ հիմնական գործընկեր երկրների ԿԲ-ների վարած հետևողական դրամավարկային քաղաքականությամբ, իսկ մյուս կողմից ՀՀ տնտեսությունում դեռևս պահպանվում են մեծ պահանջարկ ու բարձր գնաճային սպասումներ: Խորհրդի անդամների մեծամասնությունը գտնում էր, որ նման իրավիճակում իրականացված դրամավարկային քաղաքականությունն ու դրամի արժևորումն իրենց ազդեցությունն աստիճանաբար փոխանցում են պահանջարկի և գնաճի կարգավորման ուղղությամբ, ուստի, հաշվի առնելով նաև երկրի ռիսկի հավելավճարի նվազման միտումը, ներկայումս դրամավարկային պայմանների փոփոխության անհրաժեշտություն չկա: Միաժամանակ, Խորհրդի որոշ անդամների կարծիքով պետք է կարևորել աշխատավարձերի և գնաճի վրա պահպանվող բարձր պահանջարկի էական ազդեցության գործոնը և շարունակել բարձրացնել քաղաքականության տոկոսադրույքը: Արդյունքում, **ԿԲ Խորհուրդը ձայների մեծամասնությամբ որոշեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը ներկայումս թողնել անփոփոխ:** ԿԲ Խորհուրդը նաև հաստատեց իր հետևողականությունը՝ համարժեք գործողություններով ապահովելու գնաճի կայունացում և չեզոքացնելու գնաճային սպասումների ապախարսխման ցանկացած ռիսկ: Դրամավարկային քաղաքականության ներկայացված սցենարի համաձայն 12-ամսյա գնաճն աստիճանաբար կնվազի և 2023 թ-ի երկրորդ կեսից կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

ԿԲ Խորհուրդը գնահատում էր, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:

Խորհուրդը հաստատեց ԿԲ գործիքների տոկոսադրույքների վերաբերյալ որոշումը և առաջարկվող մամուլի հաղորդագրությունը, որոնք կցվում են:

**Տոկոսադրույքի որոշում**

**ԿՈԴ**

**050.0012 L. 31.01.23**

**31 հունվարի 2023 թվականի թիվ 12 L**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ  
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ  
ՎԵՐԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԱՄԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ  
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով, 20-րդ հոդվածի «գ» և «ե» կետերով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

**Ո Ր Ո Ղ Ո Մ Է.**

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանել 10.75%:
2. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպո գործիքի տոկոսադրույքը սահմանել 12.25%:
3. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից դրամական միջոցների ներգրավման գործիքի տոկոսադրույքը սահմանել 9.25%:
4. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ մամլո հաղորդագրությանը (կցվում է):
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ինտերնետային տնային էջում հրապարակման օրվան հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության  
կենտրոնական բանկի նախագահ՝  
Երևան**

**Մ. Գալստյան**

## ՄԱՍՈՒԼԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

31.01.2023

2023թ. հունվարի 31-ի նիստում ԿԲ Խորհուրդը որոշեց վերաֆինանսավորման տոկոսադրույքը թողնել անփոփոխ՝ սահմանելով 10.75%:

2022թ. դեկտեմբերին 12-ամսյա գնաճը շարունակել է նվազել և տարեվերջին կազմել է 8.3%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս նվազել է՝ կազմելով 9.5%:

2022 թվականի վերջին համաշխարհային և ՀՀ հիմնական գործընկեր երկրների տնտեսական ակտիվության դանդաղումը շարունակվել է: Համաշխարհային գնաճը ևս նվազում է՝ պայմանավորված որոշ հումքային և պարենային ապրանքների գների նվազմամբ: Այնուամենայնիվ, հարաբերականորեն ընդլայնված պահանջարկը նպաստում է գնաճային միջավայրի պահպանմանը: Ուստի, զարգացած երկրների կենտրոնական բանկերն առաջիկայում դեռևս կշարունակեն խստացնել դրամավարկային պայմանները: Դա կնպաստի համաշխարհային պահանջարկի թուլացմանը և միջազգային ապրանքահումքային շուկաներում գների որոշակի ճշգրտմանը: Արդյունքում՝ համաշխարհային տնտեսությունից ՀՀ տնտեսության վրա ակնկալվում է գնաճային ազդեցությունների թուլացում:

2022թ-ի վերջին ՀՀ տնտեսությունում բարձր ակտիվությունը պահպանվել է, որին շարունակել է նպաստել ծառայությունների ոլորտում ձևավորված արտաքին բարձր պահանջարկը: Միաժամանակ, պահպանվել են արտահանման և ՀՆԱ ներուժի ավելացման դրական միտումները ծառայությունների և արդյունաբերության ճյուղերում: Իրականացված զսպող դրամավարկային քաղաքականության, դրամի արժևորման և արտաքին հատվածից գնաճային ազդեցության թուլացման արդյունքում ՀՀ ընդհանուր գնաճային միջավայրն աստիճանաբար մեղմվում է: Այնուամենայնիվ, բարձր պահանջարկը դեռևս արտահայտվում է աշխատուժի շուկայում և նպաստում աշխատավարձերի և առանձին ապրանքների ու ծառայությունների գների աճին:

**ԿԲ Խորհուրդը նպատակահարմար է գտնում ներկայումս քաղաքականության տոկոսադրույքը թողնել անփոփոխ:** Խորհուրդը հետևողական է լինելու համարժեք գործողություններով ապահովելու գների կայունացում և չեզոքացնելու գնաճային սպասումների ապախարսխման ցանկացած ռիսկ: Դրամավարկային քաղաքականության նախանշված սցենարում 12-ամսյա գնաճն աստիճանաբար կնվազի և 2023թ-ի երկրորդ կեսից կկայունանա նպատակային 4% ցուցանիշի շուրջ:

ԿԲ Խորհուրդը գնահատում է, որ նախանշված ուղեգծից գնաճի շեղման ռիսկերը հիմնականում հավասարակշռված են: Ռիսկերի որևէ ուղղությամբ դրսևորման պարագայում Խորհուրդը համարժեքորեն կարձագանքի և կապահովի գների կայունության նպատակը:

---

*Հաղորդագրությունից օգտվելու դեպքում հղումը սկզբնաղբյուրին պարտադիր է:*

*ԿԲ հասարակայնության հետ կապերի ծառայություն*

*հեռախոս. (010) 592592-0702*

*էլ-փոստ. [mcba@cba.am](mailto:mcba@cba.am)*

*[www.cba.am](http://www.cba.am)*